

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻՆ ՄԵՍՐՈՊԵԱՆ ԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա. Ս. ՄԱՔԵՎՈՍՅԱՆ

Մովսես Խորենացին Հայոց Մեծաց Պատմության մեջ բավականին շատ տեղ է հատկացրել իր երանելի ուսուցչի և նրա աստվածատուր շնորհքով ստեղծած նշանագրերի պատմությանը, որի մասին գրում է ականատեսի և ականջալուրի իրավունքով: Ուստի Խորենացին, որպես հայոց գրերի ուսումնասիրության վստահելի սկզբնաղբյուր, V դարից օգտագործվել է հայ մատենագրության, իսկ հետագայում՝ բանասիրության մեջ, նույնիսկ այն ժամանակ, երբ նրան փորձում էին դարից դար տեղափոխել:

Մեսրոպ Մաշտոցի և հայոց գրերի ստեղծման հնագույն և առաջին սկզբնաղբյուրը նրա ավագ աշակերտ Կորյունի Պատմությունն է: Ո՞րն է երկրորդ աղբյուրը. բանասիրության մեջ կարծիքները տարբեր են: Անցյալ դարավերջին Ի. Հարությունյանը այսպես է հերթակարգում. Կորյուն Սքանչելի, Մովսես Խորենացի, Ղազար Փարպեցի¹: Նույն կարծիքին է այսօր Պ. Անանյանը. Կորյունից հետո առաջնակարգ աղբյուր են Մովսես Խորենացին և Ղազար Փարպեցին²: Ն. Բյուզանդացին³, Հ. Մանանդյանը⁴, Մ. Աբեղյանը⁵, Հր. Աճառյանը⁶ Կորյունից հետո նախընտրում են Ղազար Փարպեցու, ապա՝ Մովսես Խորենացու երկը: Հ. Մարկվարտը⁷ և Մ. Օրմանյանը⁸ ամենահաստատուն աղբյուր են համարում Ղազար Փարպեցուն: Գ. Ֆնտզյանի կարծիքով՝ ուր որ Խորենացին Կորյունից դուրս ավելի վկայություն ունի, սխալ է⁹: Ն. Ակիբյանը հայ գրերի գլուտի միակ ժամանակակից պատմագիրն է համարում Կորյունին՝ «անտեսելով բոլորովին անագանագույն շրջանի հեղինակներին ի մեջ այլոց կեղծ-Ղազար Փարպեցին և Մովսես Խորենացին»¹⁰:

Մեսրոպ Մաշտոցի և հայոց գրերի ծագման մասին Մովսես Խորենացու վկայությունների նկատմամբ այսպիսի ծայրահեղ վերաբերմունքը հետևանք է այն բազմաթիվ և իրարամերժ քննադատության և գնահատության, որ գոյություն ունեն հայոց պատմահոր և նրա Հայոց պատմության նկատմամբ: Այդ խառնաշփոթ վերաբերմունքին հիմնականում վերջ տվեցին 1939—1940 թթ. լույս տեսած հետազոտությունները, վերականգնեցին նրա Պատմության արժեքն ու այն ճշմարտությունը, որ նա եղել է Մեսրոպի կրտսեր

¹ Ի. Հարությունյան. Հայոց գիրը. Թիֆլիս, 1892, էջ 208:

² Պ. Անանյան. Վարք ս. Մեսրոպ Մաշտոցի. Վենետիկ, 1964, էջ 7:

³ Ն. Բյուզանդացի. Կորին վարդապետ և Նորին թարգմանութիւնք. Տփլիս, 1900, էջ 9:

⁴ Հ. Մանանդյան. Մեսրոպ Մաշտոցը և հայ ժողովրդի պայքարը մշակութային ինքնուրույնության համար.—Մեսրոպ Մաշտոց (ժողովածու), Երևան, 1962, էջ 31:

⁵ Կորյուն. Վարք Մաշտոցի. Երևան, 1981, էջ 18:

⁶ Հ. Աճառյան. Հայոց գրերը. Երևան, 1984, էջ 5:

⁷ Հ. Մարկվարտ. Հայոց ալբուրենի ծագումը և Մ. Մաշտոցի կենսագրությունը.— Մեսրոպ Մաշտոց (ժողովածու), Երևան, 1962, էջ 135:

⁸ Մ. Օրմանյան. Ազգապատում. հ. Ա, Բելյուսթ, 1959, էջ 274:

⁹ Գ. Ֆնտզյան. Կորին. Վարք Մաշտոցի, Երևան, 1930, էջ 73:

¹⁰ Կ. Ակիբյան. Ս. Մեսրոպ Վարդապետ. Վիեննա, 1949, էջ 245:

աշակերտներից, ապրել և ստեղծագործել է V դարում¹¹։ Ուստի «մեր պատմահայր և քերթողահայր Մովսես Խորենացուն էլ ուրիշ բան չի մնում անել, բայց լթե ետ քաշվել ու նստել իր հին ու բնական տեղում, V դարում», — դրում է Մ. Արևդյանը¹²։

Ժամանակագրական առումով Կորյունին հաջորդում է Մովսես Խորենացին։ Հայոց պատմությունը նա ավարտել է 474 թ.¹³ ինչպես վկայում են Աթանաս Տարոնացի տոմարագետը (VI դար)¹⁴ և Թովմա Արծրունին։ Վերջինիս վկայությամբ «...դրեաց վարդապետն Մովսէս տիեզերահռչակեալ քերթողն ղգիրս Պատմութեան Հայոց Մեծաց հրաշագան յօրինուածով, սկսեալ յԱդամ մինչև ի կայսեր Զենոն»¹⁵։ Զենոն կայսրը դահ է բարձրացել 474 թ.¹⁶։ Այդ թվականին է հասնում նաև Խորենացու Զորորդ դիրքը, որը կոչվում է «Վերադարձութիւնն ի վերալ երեցունց դրուագեալ հատուածին», որի գոյությունը այսօր կասկած չի հարուցում։

Նկատի պետք է ունենալ, որ ի տարբերություն առաջին աղբյուրի, որը միայն վարքագրություն է և նվիրված է Մեսրոպ Մաշտոցին ու նրա մեծագործությանը՝ հայոց գրքերի գյուտին, երկրորդ աղբյուրը հայոց հազարամյակների ընդհանուր պատմություն է, որի մեջ Մաշտոցի կյանքն ու գործը ներկայացված են ժամանակի իրադարձությունների շղթայում։

Մովսես Խորենացի պատմիչն ունի պատմությունը շարադրելու իր սկզբունքները։ Նա ևս ապրել է այն օրերում, երբ ծավալվում էր հայոց դարության ստեղծման համազգային շարժումը, աշակերտել է Մեսրոպ Մաշտոցին և լսել նրա շուրթերից հայոց գրքերի ստեղծման մասին։ Նա շատ բան է լսել նաև Մեսրոպի ավագ աշակերտներից։ Վերջապես, նա օգտվել է Կորյունից։

Միևնույն մարդու և երևույթի մասին մոտավորապես նույն վիճակում դրսևող ժամանակակիցները կարող էին մոտավոր նմանությամբ պատմել։ Ուրոշ տարրերությունները բնական պետք է համարել, նկատի ունենալով պատմիչների անհատականությունը, ինչպես նաև մատենագրական երկի բնույթը՝ մի դեպքում մի մարդու վարքագրություն, մյուսում՝ այդ նույնի ներգրուտումը ընդհանուր պատմության մեջ, որտեղ երբեմն, բնականաբար, շատ բան է ռաց թողնվել, համառոտվել, երբեմն՝ ավելացվել։ Կարևոր է նաև այդ երկերի հետագա ճակատագիրը՝ գործածության չափը, ընդօրինակելու հաճախականությունը։ Զպետք է մոռանալ, որ Կորյունի ու Խորենացու երկերը գրվել են տասնհինգ դար առաջ, ունեցել են բազմաթիվ ընդօրինակություններ, ընդ որում, Խորենացու գործը ավելի շատ, քանի որ այն եղել է դասագիրք։ Հաճախ ավելի քիչ գրագետ գրիչների ձեռքով է ընդօրինակվել և խախտումներն անխուսափելի են մանավանդ այս կարգի գործերում, որոնք կանոնական չեն։

Այս ամենը նկատի ունենալով՝ ամեն ինչ պատմիչի «դիտավորությամբ» կամ «անտեղյակությամբ» չպետք է բացատրել, միշտ հիշելով, որ ձեռագիրը «թէպէտ և ի միոջէ դրեցաւ, ալ յալլմէ ընդօրինակեցաւ»¹⁶։ Ակինյանի ակնարկը, թե «յստակ ակնաղբյուրին առջև նստած չեմ կարոտիր պղտոր ջուրերու»¹⁷, Խորենացու նկատմամբ իրավացի չէ։ Կորյունի հստակություն ունի

11 Ատ. Մ ա լ խ ա ս յ ա ն. Մովսես Խորենացի, Մատենագրական տեղեկություններ. Երևան, 1961, էջ 69—70։

12 Մ. Արևդյան. Երկեր. հ. Գ, Երևան, 1968, էջ 286։

13 Ա. Մ աթ ե ո ս յ ա ն. Մովսես Խորենացին և Աթանաս Տարոնացու ժամանակագրությունը.— «Պատմա-բանասիրական հանգես», 1989, № 1։

14 Թովմա Արծրունի և Անանուն. Պատմութիւն Տանն Արծրունեաց. Երևան, 1955, էջ 122։

15 Կ իր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ծ ի. Պատմություն Հայոց. Երևան, 1961, ժամանակագրական տախտակներ, էջ 403։

16 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե—Ժ գրքեր, աշխատասիրեց Ա. Մաթևոսյան. Երևան, 1988, էջ 212։

17 Ն. Ա կ ի ն յ ա ն. Նշվ. աշխ., էջ 245։

նաև հորենացին, որովհետև երկուսն էլ խմել են միևնույն «հասակ աղնաղբյուրեն»։ Այն անսահման սերն ու հավատը, որ ունի հորենացին Մաշտոցի նկատմամբ և որոնք իրենց արտահայտությունն են գտել նրան նվիրված էջերում և հատկապես խոսվածույզ «Ողբում»¹⁸, թույլ չէին տա նվիրյալ աշակերտին դուզն ինչ խեղելու իր երանելի հոր, հայոց աշխարհի ուսուցա-ձողի գործը, մարդու, որ էր «գերազանցեալ քան զամենայն որք զայնու ժամանակաւ էին առաքինիք»¹⁹։

Կորյունի և հորենացու տեսակետները հայոց գրի ստեղծման վերաբերյալ համահնչուն են, միմյանց լրացնող ու ամբողջացնող։ Այդ պատճառով հայոց գրի ստեղծման պատմությունը շարադրում ենք հետևելով Կորյունին և հորենացուն, անտեսելով Ն. Ակինյանի յուրատեսակ «բանադրանքը», թե՛ «անոնք որոնք աշխատանք թափեցին ժամանակակից պատմագրին և անագանագունն աղբյուրներու վկայությունները հաշտեցնել, կամ անոց համաձուլումով հայ նշանագրերու պատմությունը հյուսել, սնավաստակ եղանակ»²⁰։

Սակայն ավելի ճիշտ է երիտասարդ բանասերը. «Թեև Կորյունը մի ամբողջ գիրք է գրել Մ. Մաշտոցի մասին, — գրում է Ս. Հայրապետյանը, — սակայն Հայոց նահապետի կերպարը չէր լինի այսքան ամբողջական, եթե չլիներ հորենացու աշխատության մեջ Մաշտոցին վերաբերող հատվածները»²¹։

Ինչպես նկատեցինք, Մովսես հորենացին Մեսրոպ Մաշտոցի գործունեությունը ներկայացնում է հայ ժողովրդի պատմության հենքի վրա, որպես նրա անքաքտելի օղակ, ժամանակի պահանջով ստեղծված պատմական իրադարձությունների տրամաբանական շարունակություն։ Այդպես էլ սկսում է «Յաղագս երանելուն Մեսրոպայ» գլուխը. «Տեսնալ թէ թագաւորութիւնն ի վերջ հասեալ է Հայոց, և զխռովութիւնն նիւթ իւրոյ համբրութեանն գտեալ Մեսրոպայ»²²։ Հայոց թագավորության վերջն ավելի հստակորեն ուրվագծվում է 387 թ. Հայաստանը Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև բաժանելուց հետո։ Արքունական տան ատենադպիր Մեսրոպն այն ավելի լավ է տեսնում։ Եվ նա հրաժարվում է արքունիքից, ապրում մենակյացի կյանքով, որը նրան հնարավորություն կտար խորհելու խոսվածույզ իրադարձություններից դուրս գալու մասին։

Մեսրոպ թարգմանիչը գնում է Գողթան գավառ քարոզչության։ Հայոց թագավորության վերջը հասնելու մոտալուտությունը նրան մղում է եռանդուն գործունեության։ Հեթանոսական ծածուկ աղանդը, որ գլուխ էր բարձրացրել Արշակունյաց թագավորության տկարության ժամանակ և կարող էր նրա կործանմանը նպաստել, վերացրեց Մեսրոպը՝ Գողթան գավառի իշխան Շաբիթի հետ, և հալածեց աղանդավորներին մինչև Արաքսի մյուս ափը, Մարաց կողմերը։ Սրանից ոչ պակաս գործեր է անում և Սյունյաց նահանգում։ Վաղինակ իշխանի օգնությամբ վնասագերծում է Սյունիքը և ամբողջությամբ նվիրվում քարոզչության։

Քարոզչական գործունեության ժամանակ, քանի որ կարդացողը և թարգմանողն ինքն էր, շատ նեղություն էր կրում։ Երբ ինքն այնտեղ չէր լինում և նեկ ուրիշն էր կարդում Սուրբ Գիրքը, ժողովրդին անհասկանալի էր մնում կարդացածը։ Այստեղ Մեսրոպը մտածում է հայոց շեզվի համար տառեր ստեղծելու մասին, որպեսզի ամեն կարդացող ինքը հասկանա իր կարդացածը

18 Մովսես հորենացի. Պատմութիւն Հայոց. Տփլիս, 1913, էջ 358 (այսուհետև՝ Մովսես հորենացի)։

19 Նույն տեղում, էջ 356։

20 Ն. Ակինյան. Նշվ. աշխ., էջ 245։

21 Ս. Հայրապետյան. Հայ հին և միջնադարյան գրականության պատմություն. Լոս Անջելես, 1986, էջ 194։

22 Մովսես հորենացի. Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմ. և մեկնություններ Ստ. Մալխասյանի. Երևան, 1981, էջ 338։

և թարգմանողի կարիք չլինի. «Եւ անկեալ զանձն ի ջանս՝ պէս-պէս փորձիւք տաժանէր»²³։

Մեսրոպը վերադառնում է Վաղարշապատ, Սահակ Պարթև կաթողիկոսի մոտ։ Այժմ արդեն երկուսով են ճիգ գործադրում նշանագրերի համար։ Հայերը պետք է սեփական դիր ունենան։

Այդ ժամանակ ըլուզանդական կայսր Արկադիոսը հիվանդանում է, մայրութեան շրջանում Ոսկեբերանի արքայի պատճառով հուզումներ ու հրդեհներ են ծագում, գորքը շփոթության մեջ է ընկնում, պատերազմում են և՛ իրար դեմ, և՛ պարսիկների։ Պարսից Վռամ թագավորը Հայոց Վռամշապուհ թագավորին հրամայում է իջնել Միջագետք և խաղաղեցնել երկու կողմերին։

Այս, ինչպես նաև սրանից հետո տեղի ունեցած դեպքերի մասին Խորենացին պատմում է «Յաղագս Դանիէլեան նշանագրութեանն» գլխում։ Մեզ է հասել այդ դիսի հնագույն ընդօրինակության երկու թերթ, որպես պահպանակ, որը կարևոր տարրն թերթավածնի ունի տպագիր համեմատական բնագրի հետ և որին մենք անդրադառնալու ենք հաճախ, ուստի բերում ենք պատուիրկն ամբողջությամբ, պակաս տեղերը լրացնելով տպագրից²⁴։

ՅԱԼԱԳՍ ԳԱՆԻԷԼԻ ՆՇԱՆԱԳՐԱՅ

Յայնմ ժամանակի հիւանդացեալ Արկադ, եւ շարժմանց ահագնից եւ հրդեհի թեմանց եղևալ ի Բիւզանդիոն, որ յաղագս մեծին Յովհաննու՝ շփոթեալ լինելի թաղաւորութիւնն Յունաց, եւ գաւրքն ընդ միմեանս պատերազմեին և ընդ Պարսից։ Վասն որոյ Վռամ հրամայեաց Վռամշապուհոյ թագաւորին Հայոց իջանել ի Միջագետս գի խաղաղացուցանել կարգեսցէ՝ զնոսա. եւ համար ի երկաթանշիրոցն չհատցէ գործակալացն։

Եւ իջանել նորա ի կարիդել զայս ամենայն, ոչ փոքր ինչ կրէր զաշխատութիւն վասն քարտուղարի. զի մինչև դնաց Մեսրոպ յարթութեան կան դրանէն՝ ոչ ոք ի ճարտարաց դաւանէր բան²⁵ ի դպրաց թանգի պարսկական լան լարեին գրով։

Վասն որոյ մատուցեալ առ արքայն ռմն Հաբէլ անոն ի կոչեցեալ, խոստանալով հայկականացս նշանագիր²⁶ լեզուի յարմարեալ ի Դանիէլէ ի պիսկոպոսէ, յիւրմէ մերձաւորէ. զորով անփոյթ արարեալ արքային։

Եւ ելելալ ի Հայս՝ գտանէ ժողովեալ առ մեծն Սահակ եւ Մեսրոպ զլեզուականութեան զամենայն՝ հոգալ զլեզուի լեզուական լեզուաց, զոր արքային զգացուցին, ինչ նա պատմեաց զսալեցեալն վանականին։ Ձոր իբրեւ լուան՝ թխանածին զնա լիւթ զայնպիսեացն պիտոյից։

Վասն որոյ առաքեաց հրեշտակութեամբ զայս մի պատուական յաշխարհիս եւ հաւատարիմ իւր, Խաղունի աղդաւ, Վարճիճ անուն²⁷, յոյժ փափագաւ զնորին²⁸, առ Հարելն այն։

²³ Նույն տեղում, էջ 390։

²⁴ Մաշտոցի անվան Մատենադարան (ՄՄ), պատահիկ № 1411։ Գրված է թևք աղյուսակի դրով, բառանշատում շունի, կետագրական միայն մի նշան ունի՝ միջակետ։ Տառաձևերը բավական հին են, VIII դար կարելի է համարել։ Հրատարակել է Ս. Քուլանջյանը (Բանբեր Մատենադարանի, № 4, Երևան, 1958, էջ 163—182)։

²⁵ Տպագրում՝ «անդ»։

²⁶ Տպ. «Հայկականացս առնել նշանագիր»։ Մի տողում այսքանը չի տեղավորում։ Զի՛նչ և՛ ռուսերեն և՛ ֆրանսերեն լեզուներում արդեն չկարճարկվել էր «ի Դանիէլէ»։

²⁷ Տպ. «խաղունի»՝ «վարճի»։

²⁸ Տպ. «փափագաւ նորին»։

Ջոր առեալ երթեալ նովաւ հանդերձ քաջամտացեալ²⁹ ի Դանիէլէ, կարգեալ ի ձեւոյ արիւնակի յունականին զվաղնչուց դրեալ շարագիրս տառից, եկալ ետուն զմեծն Սահակ եւ ցՄեսրոբ:

Որոց առեալ³⁰ եւ թեաթեղով ընդ նոսա եւ տղայս զմանս³¹, սակաւ տեղեկացեալ գիտացին ոչ լինել լբաւական այնու նշանագրաւք ստոյգ հոլովել զհեգենայ բառից հայկականաց հազներգարար, մուրացածոյին այնուիկ գծագրութեամբ³²:

Այսպես, Հայոց թագավոր Վռամշապուհն իջնում է Միջագետք:

«Եւ իջեալ նորա ի կարգել զայս ամենայն, ոչ փոքր ինչ կրեր զաշխատութիւն վասն քարտուղարի, զի մինչեւ գնաց Մեսրոբ յարքունական դրանէն ոչ ոք ի ճարտարաց գտանէր բան ի դպրաց, քանզի պարսկականաւն վարէին գրով»:

Մեսրոպը արքունիքից հեռացել էր Վռամշապուհի Միջագետք գնալուց տասը տարի առաջ: Թե այդ տարիներին թագավորը նրա բացակայութեան պատճառով ինչ նեղութիւններ էր կրել, մեզ հայտնի չէ: Բայց ահա այստեղ, Միջագետքում, պարսիկներին և հույներին խաղաղացնելիս, թագավորը Մեսրոպի կարիքն է զգում, որովհետեւ արքունիքում պարսկական գիր էին օգտագործում:

Հասկանալի է, որ Հայոց թագավորը հույների հետ առնչվելիս հունարեն գիր և լեզու էր օգտագործում, պարսիկների հետ՝ պարսկական գիր և լեզու, իսկ հայերի հետ՝ հայերեն լեզու և պարսկական գիր: Մի բան, որ ընդունված էր դեռևս վաղ ժամանակներում³³:

Մեղադրելով մեր թագավորների և իշխանների անիմաստասեր բարքը «...այնոքիկ, որ և ոչ անձանց խորհեցան բարի առնել, և անուն յիշատակի յաշխարհի թողուլ», նորենացին շարունակում է. «Այլ ասիցէ որ արդեօք. վասն ոչ լինելոյ գիր և դպրութիւն ի ժամանակին, կամ վասն պէս-պէս պատե-րաւմացն... Այլ ոչ արդարեւ այսոքիկ կարծեցեալ լինի, քանզի գտանին և միջոցք լեալ պատեռազմացն, և գիր Պարսից և Յունաց, որովք այժմ գիւղից և գաւառաց, ևս և իւրաքանչիւր տանց առանձնականութեանց, և հանուրց հակառակութեանց և դաշանց այժմ առ մեզ գտանին անբաւ զրուցաց մատեանք, մանաւանդ, որ ի սեպհական ազատութեան պայազատութիւնս»³⁴: Այստեղ, իսկապես, խոսքը գրի և ոչ լեզվի մասին է, ուր խոսքը գնում է հայերի գյուղերի և գավառների, ամեն մեկի սեփականութեան, նրանց վեճերի, դաշինքների, մանավանդ սեպհական ազնվականութեան ծագման վերաբերյալ անբավ զրուցաց մատչանքների մասին, որոնց գիրը այլալեզվի էր՝ «Պարսից և Յունաց», իսկ լեզուն՝ հայերեն:

Իսկ ո՞րն էր Վռամշապուհ թագավորի կրած նեղութիւնը:

«Դարձեալ ի բաժանել զաշխարհս Հայոց շտային պարսիկ վերակացուքն

29 Տպ. «քաջ հմտացեալ»:

30 Տպ. «ուսեալ»:

31 Տպ. «տղայոց զմասն»:

32 ՄՄ, պատահիկ 1411, էջ 1ա—1բ: Հմմտ. Մ ո վ ս ե ս Խ ո Ր Ե Ն ա Յ Ի, էջ 402: Ս. Ք ո լ ա ն շ յ ա ն, Մ ո վ ս ե ս Խ ո Ր Ե Ն ա Յ ու նորահայտ երկաթագիր պատահիկն ու Դանիելյան նշանագրերի օգտագործման ժամանակի հարցը.—«Բանբեր Մատենադարանի» № 4, էջ 172:

33 Երբ Որեգենեսը Աստվածաշնչի թարգմանություններից կազմում է իր Ութիշյանը, բնագրերը դասավորում է այսպես. «Եւ երկու եբրանցիս ի միջի. բան եբրանցի և գիր եբրանցի: Եւ մի ի մէջ. բան եբրանցի և գիր հեղենական լեզուով զի որ ոչն գիտացէր եբրանցի զգիրն, հեղենական լեզուաւ հասուկ լինիցի եբրանականին»:

Ուրեմն «գիր հեղենական լեզուով» նշանակում է «հեղենացի գիր», ուստի «պարսկականաւ վարէին գրով» նշանակում է գրելն պարսկական գրով և ոչ թե լեզվով: Հայերը նախաժառանգաւ շրջանում օգտագործել են հունարեն և ասորերեն լեզուն և գիրը: Միաժամանակ այդ երկու լեզուների գրերը օգտագործել են նաև հայոց լեզվով գրություններ գրելու համար: ՄՄ, ձեռ. № 2679, էջ 211ա:

34 Մ ո վ ս ե ս Խ ո Ր Ե Ն ա Յ Ի, էջ 12:

յոյն ումեք ուսանել դպրութիւն յիւրեանց մասին, այլ միայն ասորիք³⁵, — դրում է խորենացին: Հունարենը Հայաստանի պարսկական բաժնում արգելված էր: Թույլատրվում էր միայն ասորերեն գիրն ու լեզուն: Իսկ հայերեն դրելու համար օգտագործվում էր պարսկական գիրը: Ահա այս պարսկական գիրը, որ հայերենի հնչյունական համակարգի համար պակասավոր է, Մեսրոպ թարգմանիչը կարողանում էր հայերեն լեզվին այնպես հարմարեցնել, որ բոլորովին հասկանալի և հասու է լինում, որից թագավորը շատ գոհ էր: Արքունիքից հեռանալուց հետո նրան փոխարինող չի գտնվել: Իսկ թագավորը պատերազմական պատասխանատու պայմաններում ավելի շատ է զգացել նրա կարիքը՝ իր և զորքի կապը պարսկական գրով ու հայերեն լեզվով ապահովելու համար:

Այստեղ է, որ Հարելը առաջարկել է պարսկական գրի փոխարեն՝ հայերեն լեզվի նշանադրեր, որն արդեն հարմարացրել էր Դանիելը: Քվասն որոյ մատուցեալ առ արքայն ոմն Հաբէլ անուն կոչեցեալ, խոստանալի հայկականացս նշանագիր լեզուի, յարմարեալ ի Դանիելէ եպիսկոպոսէ յիւրմէ մերձաւորէ, զորոյմ անփոյթ արարեալ արքային³⁶, Վռամշապուհը անուշադրության է մատնում Հաբելի առաջարկութիւնը: Հավանաբար այն պատճառով, որ Միջագետքում իր գործն ավարտել էր և տուն էր շտապում:

Վերադառնալով Հայաստան, նա տեսնում է Սահակ կաթողիկոսին, երբեմնի արքունական ատենադպիր Մեսրոպ թարգմանչին և եպիսկոպոսներին՝ հայոց դրերի և դպրության ստեղծման համար ժողով անելիս: Երբ վերջիններս այդ մասին տեղյակ են պահում արքային, Վռամշապուհը այստեղ առաջին անգամ պատմում է Միջագետքում Հաբելի առաջարկության մասին: Խնդրում են թագավորից բերել տալ Դանիելի հարմարեցրած գրերը: Թագավորը կատարում է նրանց ցանկութիւնը:

Ահա այդ հատվածը. «Եւ ելեալ ի Հայս, դտանէ ժողովեալ առ մեծն Սահակ եւ Մեսրոպ դեպիսկոպոսունս զամենայն հոգալ ղգիւտ դպրութեան Հայոց, զոր արքային զգացուցին եւ նա պատմեաց զասացեալն վանականին: Զոր իրեւ լուան, թախանձեին զնա փոյթ ղայնպիսեացն առնել պիտոյց: Վասն որոյ առաքեաց հրեշտակութեամբ ղայր մի պատուական յաշխարհէս եւ հաւատարիմ իւր՝ խաղունի աղգաւ, Վահրիճ անուն, յոյժ փափագաւ նորին գործոյ, առ Հարելն այն: Զոր առեալ եւ երթեալ նովա հանդերձ՝ քաջ հմտացեալ ի Դանիելէ կարգեալ ի ձեւոյ աւրինակի յունականին ղվաղորնչոցն դրեալ շարագիրս տառից, եկեալ ետուն ղմեծն Սահակ եւ ղՄեսրոպ³⁷»:

Պատահիկի, համեմատական բնագրի և աշխարհարար թարգմանության մեջ կարևոր տարրն թերցվածներ կան և պետք է դրանք ուշադրության առնել: «Խաղունի»՝ թե «խաղունի» տոհմանվան ճշգրտութիւնը կորուզվի երրորդ վկայությամբ, որը կհավաստի այդպիսի տոհմի երբեմնի գոյութիւնը: Զէ որ ունենք «խաղտիք» գավառ, որից կարող էր «խաղունի» տոհմանունն ծագել, կամ րնդհակառակը՝ «խաղունի» տոհմանունից՝ «խաղտիք» տեղանունը:

Քվարճիճ բառի առաջին ճ-ն գրիչը կարող էր երկրորդի ազդեցությամբ դրած լինել, ինչպես հաճախ պատահում է, իսկ «փափագաւ զնորին»-ում մինչև բառանշատումը ղ և զ տառերը շփոթել են, բառանշատվելիս տրամաբանորեն դրվել է «փափագաւ զնորին» մինչդեռ հեղինակը գրել է «փափագաւ զնորին»:

«Քաջամտացեալ» բառը պատահիկից բացի օգտագործված է նաև «Պիտոյից» դրքում և «այլուր Քաջամիտ» ձևով, և նշանակում է «սրամիտ, կորովամիտ, հանճարեղ» և այլն, ինչպես և գոյականաբար՝ «կորովամտութիւն, առատամտութիւն, բարեսիրութիւն»³⁸: Պատահիկում Քաջամտացեալ ի Դանիելէ» բառակապակցության մեջ այն համարյա նույն է «յարմարեալ» բառի

35 Նույն տեղում, էջ 408:

36 Նույն տեղում, էջ 402:

37 Նույն տեղում:

38 Նոր բառգիրք Հայկազեան լեզուի. Վենետիկ, 1836, հ. Բ, էջ 986:

հետ՝ «յարմարեալ ի Դանիելէ», որ ունենք մի քանի տող վերև և վերաբերում է նշանագրերին. «Հայկականացս նշանագիր լեզուի յարմարեալ ի Դանիելէ»: Ուստի այստեղ այն նշանակում է՝ «սրամտորեն հարմարեցված Դանիելից»: Ահա թե ինչու:

Վոսմշապուհ թագավորը Վահրիճին ուղարկում է նշանագրերի համար առ Հարելն այն», որն իրեն պատմել էր գրերի մասին: Կորյունը շատ որոշակի ասում է. «Իսկ Հաբելին զայն լուեալ, փութանակի հասանէր առ Դանիելն, և նախ ինքն տեղեկանալով ի Դանիելէ նշանագրացն և ապա առեալ ի նմանէ առաքէր առ արքայն յերկիրն Հայոց»³⁹: Այսինքն՝ Հաբելը առանց Վահրիճի, միայնակ է գնացել Դանիելի մոտ և միայն ինքն է ծանոթացել նշանագրերին:

Վահրիճը Դանիելի մոտ չի եղել: Այդպես է նաև խորենացու պատահիկում՝ Վահրիճը գնաց «առ Հաբելն այն»: Զոր առեալ եւ երթեալ նովա հանդերձ քաջամտացեալ ի Դանիելէ (զնշանագրացն), (բաց ենք թողնում միջանկյալ նախադասութիւնը) եկան ետուն ցմեծ Սահակ և ցՄեսրոբը: Այսինքն (Հաբելը) վերցնելով Դանիելից կարգած նշանագրերը նրա (Վահրիճի) հետ գնաց (նկատենք որ Հաբելի համար Միջագետքից Հայաստան տեղափոխվելը գնալ է նշանակում, Վահրիճի համար՝ գալ), եկան, մատուցեցին մեծ Սահակին և Մեսրոպին: Ուրեմն. Հաբելը Դանիելից վերցրեց նշանագրերը և Վահրիճի հետ բերին մատուցեն մեծ Սահակին և Մեսրոպին: «Քաջամտացեալ» բառը «քաջ հմտացեալի» վերածողները խեղել են պատմական իրողութիւնը. «նրան հետն առած՝ միասին գնացին և Դանիելից լավ հմտացան» շարադրութիւնը հակասում է խորենացու պատահիկին և Կորյունի երկին, որտեղ կարողում ենք. «Իսկ Հաբելին ... փութանակի հասանէր առ Դանիելն... առեալ ի նմանէ... ի հինգերորդ ամի թագաւորութեան նորա (Վոսմշապուհի) ի նա հասուցանէր: Իսկ արքային հանդերձ միաբան սրբովքն Սահակաւ և Մաշթոցիւ՝ ընկալեալ զնշանագիրսն ի Հաբէլէն ուրախ լինէին»⁴⁰:

Զիշտ չէ ընկալված և միջանկյալ նախադասութիւնը. «...կարգեալ ի ձեռն արհմանակի յունականին զվաղնջուց դրեալ շարագիրս տառից», որ թարգմանված է «(Դանիելից լավ հմտացան) վաղուց գրված տառերի շարքին, որ դասավորված էր հունարենի օրինակով», «վաղուց գրված տառերի շարքը դասավորված էր հունարեն այբուբենի օրինակով»: Բայց ինչու են Դանիելի գրած տառերը կոչվում «վաղնջուց դրած», իսկ «շարագիրս տառից»՝ «տառերի շարք»: Շարագիր բառն արդեն ունի շար և դիր բառերը և գրի կողքին տառն ավելորդ է: Այստեղ «շարագիրը» ոչ տառ է նշանակում, ոչ էլ շարք:

Հայկազյան բառարանում կարդում ենք. «Շարագիր, շարագրող, շարագրող գրոց, մատենագիր, վիպագիր հեղինակ»: Ապա՝ «Շարագրութիւն, դրուած, մատենագրութիւն, շարագրած, ևս և նշանագիրք դրոշմեալք, շարագրած բան, և տառեր»: Այս հատվածում «շարագրի» «մատենագիր», «հեղինակ» նշանակութիւնն էլ անպատշաճ է, քանի որ խոսքը շարագրվածի, գրվածի (վաղնջուց գրեալ) մասին է և ոչ գրողի: Ուստի մնում են «շարագրութիւն», «մատենագրութիւն», «գրուած» և նման իմաստները, որոնց համար բառարանում որպես օրինակ բերված է նաև խորենացու սուլն քաղվածքը (ի միջի այլոց այն գործածված է նաև «Պիտոյից գրքում» հեղինակի առումով): Ուրեմն, «շարագիրս տառից» նշանակում է «մատենագրութիւն տառերի, երկերի» և ոչ թե «տառերի շարք»:

Այս տառերը վաղուց գրված մատենագրութիւն տառերի օրինակով էր Դանիել ասորին կարգել, հարմարեցրել հայոց լեզվի համար: Հետևաբար Դանիելյան գրերը ոչ թե՛ «դասավորված էին հունարենի օրինակով» կամ «հունարեն ալֆաբետի օրինակով», այլ հարմարեցված, կարգված «հունարեն վաղնջուց գրված մատենագրութիւն տառերի օրինակով»: Իսկ այդպիսինք եղել են:

³⁹ Կորյուն, էջ 92:

⁴⁰ Նույն տեղում:

Հունական հնագույն գրություններում տառերը դեռևս շատ նման էին փյունիկյան տառերին, որոնք հույները յուրացրել էին մ. թ. ա. VIII դարում: Հունական գրի նորրո տարատեսակը՝ բարակ և ուղղանկյուն գծերով, համընդհանուր կիրառություն է ստանում միայն մ. թ. ա. III դարում: Հռոմեական կայսրերի ժամանակ իշխում էր «կուրսիվ» գրատեսակը, իսկ մ. թ. III դարում՝ մենաշնորհը անցնում է «ունցիալ» գրատեսակին, որի տառերն ավելի ու ավելի կլոր ձև էին ստանում և կոչվում նաև «մոնումենտալ գիր»: Այս նոր գրատեսակը գործածվում էր մ. թ. III—IX դդ.: Բնականաբար, Սահակն ու Մեսրոպը սովորել են այս վերջին գրերով, իսկ Դանիելը օգտագործել է մ. թ. ա. VIII—III դդ. փյունիկականին շատ նման «հունական վաղընջուց» գրեթե մատյանները՝ նրանցից բաղկացած սեմիտականին մոտ նշանագրեր՝ հայերենի համար⁴¹:

Ուստի այն պետք է թարգմանել հունական վաղընջուց գրված մատենադրության տառերի օրինակով: Ահա և ամբողջական շարադրանքը. «...առ Հարելն այն: Որը (Հարելը) վերցնելով հունական վաղընջուց գրված մատենադրության տառերի օրինակով Դանիելից սրամտորեն կարգված նշանագրերը, նրա (Վահրի) հետ գնալով, բերին մատուցեցին մեծ Սահակին և Մեսրոպին»:

Ժամանակին այսպես է հասկացել Մ. Չամչյանը. Դանիելը «ուսույց զհնդենայն», այսինքն զհղանակ հեզելոյն գտառն, զոր ստեղծեալ էր ըստ նմանութեան յունական տառից և գրոց»⁴²: Լրիվ համապատասխանում է և լրացնում Կորյունին. «նշանագիրքն իսկ յայլոց (հունական) դպրութեանց (տառից և գրոց կամ մատենագրութեանց) քաղեալք և յարուցեալք դիպեցան»: Խորենացու Պատմության տպագրում խիստ աղավաղված է շարունակությունը: Պատահիկում ունենք «Որոց առեալ, եւ թեւածելով ընդ նոսա եւ տղայս գոմանս, սակաւս անդեկացեալ՝ դիտացին ոչ լինել լբաւական ալնու նշանագրաւք ստոյգ հոլովել գհեզենայ բառից հայկականաց հագներգաբար մուրացածոյլն այնուիկ գծագրութեամբ»:

Համեմատական բնագրում քաղվածքի առաջին նախադասությունն ունի այսպիսի տեսք. «Որոց ուսեալ, եւ թեւածելով ընդ նոսա տղայոց զամս սակաւս, տեղեկացեսուլ դիտացին...» և այլն, և թարգմանված է (Սահակն ու Մեսրոպը.—Ա. Մ.) սովորելով, ու երեխաներին էլ վարժեցնելով քիչ տարիներ, համոզվեցին որ...: Տարբերությունը շատ մեծ է:

«Առեալ» բայը «ուսեալ», «տղայս գոմանս» «տղայոց դամս» փոխել և ստեղծել են թյուրիմացություն, հարմարեցնելով Կորյունի՝ շփոթված սխալ տեղադրված հատվածի օրինակին: Այնինչ Խորենացին գրել է «Որոնք (նշանագրերը) վերցնելով և նրանցով երեխաներից ոմանց մի քիչ սովորեցնելով, համոզվեցին, որ այդ նշանագրերը, այդ մուրացված գծագրությունը, բավական շին վանկ առ վանկ ճիշտ արտահայտել հայերեն բառերի հնչյունները»:

Նույն է Կորյունի մոտ (ճշգրտված օրինակ). «Իսկ արքային հանդերձ միարան սրբովքն Սահակաւ և Մաշտոցիւ՝ ընկալեալ զնշանագիրսն ի Հարելէն, որախ լինէին: Իսկ իբրեւ ի վերա հասեալ, թէ շին բաւական նշանագիրքն՝ ողջ ածել զսիւղոբայս զկապս հայերէն լեզուոյն, մանավանդ դի և նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց քաղեալք և յարուցեալք դիպեցան, յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոդս դառնային...»: Ինչպես տեսնում ենք, ոչ «ամս երկուս» ոչ «ամս սակաւս» պետք չէր Դանիելյան գրերը փորձելու և նրա պակասության մեջ համոզվելու համար: Բավական էր երեխաներին գրել տալ, օրինակի համար, «էջմիածին» բառը, որպեսզի տեսնեին, որ ջ և ծ հնչյունները բացակայում են, և նույնիսկ «Փառք» «աստուած» շին կարող գրել:

Այսպիսով, ըստ Կորյունի և Խորենացու Դանիելյան գրերի հետ հարցերը

⁴¹ Иоганнес Фридрих. История письма. М., 1979, с. 128, 132; Я. Б. Шницер. Иллюстрированная всеобщая история письма. СПб., 1903, с. 174—176.

⁴² Մ. Չամչյան. Պատմութիւն Հայոց. հ. Ա, Վենետիկ, 1784, էջ 491:

շատ շուտ են լուծվում: Իսկ խորենացին նույնիսկ կարևոր մանրամասներ է տալիս տառերի ձևերի մասին՝ հունարեն վաղուց գրված մատյաններից քաղված, նաև մուրացածո գծագրությամբ:

Դանիելյան գրերը մերժվեցին: «Զկնի այսորիկ ինքնին Մեսրոպ իջան է Միջագետս հանդերձ աշակերտօք առ նոյն Դանիէլ, և ոչ աւելի ինչ գտեալ քան զառաջինն՝ անցան է Եդեսիայ...»⁴³: Նույն է Կորյունի մոտ. «Առեալ երանելի Մաշտոցի դաս մի մանկտոյ... իաղայր գնայր... և երթեալ հասանէր ի կողմանս Արամի... ի քաղաքս... Եդեսիա... և ...Ամիդ»⁴⁴:

Ինչ-որ բան մնացած է եղել թագավորի, կաթողիկոսի և Մեսրոպի հոգում՝ եթե այդքան հին մատյաններ կային Դանիելի մոտ, կարող էին և այլ բաներ լինել կամ նա որևէ օգնություն ցույց տալ կարողանար Մեսրոպին: Համենայն դեպս փորձել պետք է: Եվ Միջագետք գնալիս, Մեսրոպը հանդիպում է Դանիելին, և ոչ աւելի ինչ գտեալ զառաջինն՝ անցան է Եդեսիա:

Երբ Կորյունը գրում է «Իսկ իբրեւ ի վերա հասեալ, թէ շեն բաւական նշանագիրքն ողջ ածել զսիւղորայս զկապս հայերէն լեզուին», իսկ խորենացին՝ «սակաւս տեղեկացեալ գիտացին՝ ոչ լինել բաւական այնու նշանագրաւք ստոյգ հոլովել զհեգենայի բառից հայկական հանգնէրգարար», ապա դա վաղարշապատում Դանիելյան գրերը փորձարկելուց առաջացած համոզմունքի արձանագրումն է, որին հանգեցին հայոց լեզվի հնչյունական համակարգը բացահայտող Մեսրոպն ու Սահակը, որը առավել քան բավական էր այդ գրերը մերժելու համար, որպես հայոց լեզվի հնչյունական հարստության անհամապատասխան այբուբենի: Իսկ երբ Կորյունը գրում է «մանաւանդ զի և նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց քաղեալք և յարուցեալք դիպեցան», իսկ խորենացին՝ «կարգեալ ի ձևոյ աւրինակի յունականին զվաղնջուց դրեալ շարագիրս տառից... մուրացածոյն այնուիկ գծագրութեամբ», ապա Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի հունական բարձրագույն կրթություն ստանալու արդյունք է հին գրերին ծանոթ լինելը, քանի որ Հայաստանում այդպիսիք չկային, ոչ էլ հունական վաղուց գրված մատենագրության երկեր կարելի էր գտնել: «Քանզի նախ ի Մհերուժանայ այրեալ լինէին ընդհանուր աշխարհիս յոյն գիրք, դարձեալ ի բաժանել զաշխարհս Հայոց՝ շտային պարսիկ վերակացուքն յոյն ուսանել դպրութիւն ումեք յիւրեանց մասին, այլ միայն ասորի»⁴⁵:

Խորենացին մինչև վերջին գիծը բացահայտում է Դանիելյան գրերի ոչ պիտանի էությունը, որպեսզի Մեսրոպյան գրերի պատմությունը փրկի աղավաղումից և թյուրիմացություններից, որ նկատել էր Կորյունի Մատյանում: Բայց Մեսրոպ Մաշտոցի ավագ աշակերտին և գործակցին ավելի են վստահել քան Պատմահորը, իսկ նոր ժամանակներում, երբ Մովսես Խորենացին ամբաստանվում էր հանրավիճի, նույնիսկ մեր օրերում, երբ հայագիտության մեջ տեղ-տեղ աղոտանում է նրա աստղը, հաշվի չեն նստում ճշմարտախոս Մովսես Խորենացու խորը իմաստությունների վիճարձանագրության նման քարկոփ վկայությունների հետ:

Մինչդեռ, ինչպես տեսանք, քննարկվող հարցում, Պատմահայրը ոչ միայն Կորյունին չի հակասում, այլև լրացնում, պարզաբանում, հարստացնում է նրա ոսկեղենիկ մատյանը:

Խորենացու և Կորյունի վկայությունների համադրությամբ պարզվում է Դանիել հպիսկոպոսի Միջագետքում գտնված տեղը:

Կորյունը գրում է, որ Մեսրոպը աշակերտներով «երթեալ հասանէր ի կողմանս Արամի՝ ի քաղաքս երկուս Ասորոց, որոց առաջինն Եդեսիա կոչի, և երկրորդին Ամիդ անուն»⁴⁶: Մ. Արեղյանը քննելով սույն հարցը, գտնում է, որ Եդեսիա քաղաքն առաջինն է կոչվել ըստ նախապատվության և ոչ ըստ

⁴³ Մովսես Խորենացի, էջ 404:

⁴⁴ Կորյուն, էջ 94:

⁴⁵ Մովսես Խորենացի, էջ 408:

⁴⁶ Կորյուն, էջ 94:

ուղևորության ճանապարհի», որ «Մաշտոցն իր աշակերտների հետ Ամիգի վրայով Եդեսիա է գնացել»⁴⁷։ Խորենացին գրում է. «Մեսրոպ իջան է ի Միջագետք հանդերձ աշակերտօք, առ նոյն Դանիէլ, և ոչ աւելի ինչ գտեալ քան դառաջինն (այսինքն՝ հունական վաղնջուց գրված մատյաններից քացի ուրիշ րան չգտելով—Ա. Մ.)՝ անցան է և Եդեսիայ»⁴⁸։ Ուրեմն Եդեսիան Միջագետքի երկրորդ քաղաքն է, ուր գնում է Մեսրոպը, իսկ առաջինը՝ Դանիելի բնակության տեղն է, կամ, ըստ Կորյունի՝ Ամիգը։ Այսպիսով, մի կողմից ճշտվում է Դանիելի բնակավայրը, մյուս կողմից Եդեսիայից առաջ գտնված քաղաքը՝ Ամիգը։

Եդեսիայում եպիսկոպոսներն ու իշխանները լավ ընդունելությունից, մեծարանքից րացի, Մեսրոպին օգնություն ցույց տալ չեն կարողանում, դրում է Կորյունը։ Խորենացին դիվանի պետ Պղատոն ճարտասանի անդորություն է ցույց տալիս Մեսրոպին օգնելու գործում, որը միայն խորհուրդ է տալիս, որպեսզի նա հանդիպի իր ուսուցիչ եպիսկոպոսին, որպես ազգործին հմուտ մարդու, որը, սակայն, տեղափոխվել էր Սամոսատ։

Մաշտոցը իր հետ տարած աշակերտներին Եդեսիայում բաժանում է երկու խմբի, մեկը թողնում է տեղում՝ ասորի դպրություն սովորելու, մյուսը ուղարկում Սամոսատ՝ հունական դպրություն սովորելու, իսկ ինքն իր ավագ աշակերտների հետ անձնատուր է լինում նշանագրեր ստեղծելու գործին, շարունակում է Կորյունը։

Խորենացու մոտ, մինչև գրերի ստեղծման անձնատուր լինելը, Մեսրոպը դնում է եպիսկոպոսի հետքերով։ Բայց քանի որ վերջինս վախճանվել էր և թողել հելեն գրչության արվեստին հրաշալի տիրապետող մի աշակերտ, Հոռփանոս անունով, որն առանձնացել էր Սամոսատում, ուղևորվում է նրա մոտ՝ Բաբելոն եպիսկոպոսի ընձեռած օգնությամբ։ Հոռփանոսից նույնպես օժանդակություն չստանալով Մեսրոպը հույսը դնում է միայն իր վրա և սկսվում են տքնության երկարատև ու լարված օրերը։

Ըստ Կորյունի միայն գրերն ստեղծելուց հետո է Մեսրոպը գնում Հոռփանոսի մոտ, ըստ Խորենացու՝ մինչև գրերն ստեղծելու ու նրանից հետո։ Այս վերջին իրողությունը մեղ շատ հավանական է թվում⁴⁹։

Մեսրոպը հայերեն գրերն ստեղծելու համար իջնում է Միջագետք, Եդեսիա րաղաք, որը ոչ միայն Արևելքի, այլև Արևմուտքի գիտության և մշակույթի նշանավոր կենտրոն էր։ Առաջին ճարտասանը նրան օգնել չկարողացավ, բայց դուցե երկրորդը կարողանա օգնել։ Ուրեմն պետք է գտնել երկրորդին։ Նա չկա, բայց կա նրա աշակերտը, ուրեմն պետք է նրան հանդիպել, որը գտնվում է Եդեսիայից ոչ հեռու Սամոսատ քաղաքում, երեսուն կմ հեռավորություն վրա։ Բաբելոն եպիսկոպոսը խոստանում է օգնել նրան այդ բանում, հավանաբար, փոխադրամիջոցներով։

Բնագրում որոշ խոշոր դրոշմներ կան այս բանում համոզվելու համար։

⁴⁷ Նույն տեղում, էջ 30—32։

⁴⁸ Մովսես Խորենացի, էջ 404։

⁴⁹ Կորյունի վկայությամբ Մաշտոցը իր հետ տարած աշակերտներին երկու մասի է բաժանում՝ «գամանս յասորի դպրութիւն կարգէր, և դումանս ի յունական՝ անտի ի Սամոսատական քաղաքն գումարէր» (Կորյուն, էջ 94)։ 2. Աճառյանը գրում է. «Գումարէր ձեռ հասարակ րայ և և կարող է առնվել թև ներգործական մտքով՝ պատրաստն ուղարկելու» (գումարեմ), և թև չկողմ մարով՝ պատրաստվեց երթալու (գումարեմ)։ Առաջին դեպքում սեռի խնդիրը (ուղիղ խնդիրը) աշակերտներն են... Երկրորդ դեպքում Մեսրոպն ինքն է, որ պատրաստվում է գնալու Սամոսատ։ Եթե Կորյունը գումարէր բառի մոտ զետեա կամ ինքն րաոր դրած լինեն, ամեն ինչ կպարզվեր» (Հայոց գրերը, էջ 116)։

Գուցե և ժամանակին դրել է այդ բառը, բայց այժմ չկա Խորենացու վկայությունը Մեսրոպի երկու անգամ Սամոսատ գնալու վերաբերյալ, հուշում է հավատալ, որ աշակերտների երկրորդ խմբին ինքն է տարել Սամոսատ և Հոռփանոսին տեսել առաջին անգամ։ Մնալով անշահ, վերադարձել է Եդեսիա և անձնատուր եղել նշանագրեր ստեղծելու գործին։ Ուրեմն այստեղ էլ Կորյունն ու Խորենացին համաձայն են։

Բանն այն է, որ Սամոսատի փոխարեն գրված է Սամոս Մ. Արեղյանը նկատել է, որ Սամոսատը աղճատվել է Սամոսի: «Եւ անցեալ ընդ Եփրատ՝ ի Սամոսատ դիմէ» դարձել է «Եւ անցեալ ընդ Փլունիկէ ի Սամոս դիմէ»: Բայց խորենացին գրում է, որ Մեսրոպը գրերը ստեղծել է Ասորոց աշխարհում և այլն⁵⁰: Եվ քանի որ Սամոսատը աղճատվել է դարձել է Սամոս, իսկ Սամոսն էլ կղզի է ուր գնալու համար Փլունիկեով պետք է անցնել՝ նավով շարունակելու ճանապարհը, ստեղծվել է այս թյուրիմացությունը:

Որ սա թյուրիմացություն է, հաստատվում է ոչ միայն Մ. Արեղյանի նշած փաստով, այլև հետևյալ իրողությամբ. Թեոդորոս կայսրը Սահակ Պարթևին մեղադրում է, որ նա, թողած Կոստանգնուպոլսի գիտնականներին, ինչոր ասորիների մոտ է փնտրել իմաստության գյուտը, որի պատճառով էլ հույները թույլ չեն տալիս Հայաստանի հոռմեական բաժնում դպրոցներ բաց անելու: «Եւ առաւել յայսմ մեղադրեմք, զի արհամարհեալ զճարտարովքս, որ ի մերում քաղաքիս՝ յասորոց ոմանց խնդրէիր զիմաստից զիտաս»⁵¹: Եթե Մաշտոցը Փլունիկեով Սամոս գնացած և գիրն այնտեղ ստեղծած լիներ, թագավորին կպատասխաներ, որ ինքը գրերն ստեղծել է ոչ թե ասորիների օգնությամբ և ասորիների երկրում, այլ հույների Սամոս կղզում և հույն հոռմոր Հոռփանոսի օգնությամբ:

Բայց ո՞չ Սամոս կղզում, ո՞չ էլ հույների օգնությամբ այդպիսի բան տեղի չի ունեցել և նա այդ ասել չէր կարող. ընդհակառակը այդ ամենը, իսկապես, տեղի է ունեցել Ասորիների երկրում, և արել է ինքը Մեսրոպը, «ի շնորհաց վերնոյն», — այսպես էլ պատճառաբանում է Մեսրոպը: Այս նշանակում է, որ խորենացու Պատմության մեջ Սամոսը Սամոսատն է, և որ Փլունիկեն հետագայում կատարված հավելագրություն է:

Որ Մեսրոպը Սամոսատում է հանդիպում Հոռփանոսին, այդ հաստատում է նաև Կորյունը: Մեսրոպը վերադառնում է Եդեսիա և անձնատուր լինում Հայոց նշանագրերի ստեղծմանը, «բազում անգամ ճգնեալ դորա յԱսորոց աշխարհին», գիտության ու մշակութի կենտրոն Եդեսիա քաղաքում:

Եդեսիան հռչակված էր իր դիվանով, որի պետը այդ ժամանակ Պղատունն էր, հեթանոս ճարտասանը, ուր կային զճարտարացն գրեան», «մատենանքն որ ի Մծբնա էին փոխեալ անդր և ի Սինոպայ Պոնտոսէ ի մեհենական պատմութեանցն», որ Ափրիկանոսը «բովանդակ փոխադրեաց որ ինչի քարտէսս դիվանին Եդեսիայ, որ է Ուրհայ, որ յաղագս թագաւորացն մերոց (Հայոց) պատմէր»⁵², խորենացին ինքն անձամբ տեսել է այդ դիվանը («քանզի և մեզէն իսկ ականատեսս եղաք այնմ դիվանի»): Որ այդ դիվանում աշխատել է Մեսրոպ Մաշտոցը, երևում է նրանից, որ դիվանում պահվող Եվսեբիոս Կեսարացու Եկեղեցական պատմությունը, որն ասորերեն էր, Մեսրոպ Մաշտոցը թարգմանել է տալիս հայերենի⁵³:

Հայոց գրերի ստեղծման նկարագրությունը խորենացու մոտ այսպիսին է. աղոթքի անձնատուր եղած Մեսրոպը «տեսանէ ոչ ի քուն երազ և ոչ յարթութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երևութացեալ հոգւոյն աշաց թաթ ձեռին աջոյ գրելով ի վերայ վիմի, զի որպէս ի ձեան վերջը զծին՝ կուտեալ ունէր քարն: Եւ ոչ միայն երևութացաւ, այլ և հանգամանք ամենայնին որպէս յաման ինչ ի միտս նորա հաւաքեցաւ: Եւ յարուցեալ յաղօթիցն՝ եստեղծ զնշանագիրս մեր, հանդերձ Հոռփանոսի կերպաձեւալ զգիրն առ ձեռն պատրաստ Մեսրոպայ, փոխատրելով զհայերէն աթուրայսն ըստ անսայթաքութեան սիւղաբայից Հելլենացւոց:

Եւ իսկոյն ի թարգմանութեան ձեռն արկեալ, խորհրդաբար սկսեալ յԱռական, բովանդակելով զքսան և զերկու յայտնիսն և զնոր Կտակս յեղու ի հայ

⁵⁰ Մ. Արեղյան. Երկեր. հ. Գ, Երևան, 1968, էջ 309, ծան. 35:

⁵¹ Պատմութի թ 1411: Հմմտ. Պատմութիւն Հայոց, էջ 416:

⁵² Մովսէս Խորենացի. էջ 136:

⁵³ Սյունյաց Գեղարքունի գավառում, Սևանա կղզու մատենադարանում այդ թարգմանությունը օգտվում է Մովսէս Խորենացին (նույն տեղում):

բան, նաև աշակերտք նորա Յոհան Եկեղեցացին և Յովսէփ Պաղնացի, միանգամայն և դարուեստ գրչութեան ուսուցանել տալով իւրոց մանկագոյն աշակերտացնս⁵⁴։

Սա. Մալխասյանը գրում է. «Գրերի գլուտի մոմենտը Կորյունի մոտ մութ է և դժվար է հասկանալ, թե ի՞նչ է ուզում ասել...»⁵⁵։

Խորենացին այս մոմենտը շատ պարզ և կենդանի է նկարագրում,—շարունակում է նա,—երկու Հեղինակն էլ հիշում են սուրբ «աջը» և «երկնային շնորհը», ուրեմն մեր գրերի գլուտը համարում են հրաշքի հետևանք։ Թվում է, թե Մեսրոպն էլ այսպես էր հավատացած։ Իհարկե ոչ մի հրաշք տեղի չի ունեցել, այլ մեր գրերի գլուտը հետևանք է Մեսրոպի երկարատև, տոկուն աշխատանքների։ Նա Խորենացու նկարագրած տեսիլքը համարում է զուտ մի տեսարանական ռեֆլեքս⁵⁶։

Անշուշտ, Մեսրոպ Մաշտոցը բոլորից լավ դիտեր իր կրած տառապանքի, նրկունքի և հայտնության արժեքը։ Կորյունի և Խորենացու այլաբանությունները ժամանակի պահանջ էին, որով նրանք Մեսրոպի մեծագործությունը կապում էին աստվածային շնորհի հետ։ «Մեր երանելի հայրերը,—գրում է Մ. Օրմանյանը,—առանց Աստծո և առանց աղոթքի գործի մը՝ ձեռնամուխ չէին լինում, և ամեն հաջողություն և անակնկալ բարեփոխություն ուղղակի աստվածային աջոյն անմիջական ներգործության կվերագրեին։

Մեսրոպ ալ, որ շարունակ աղոթքն չէր դադարած, ուրիշ կերպով չէր կրճարում մեկնել իր վերջնական հաջողությունը»⁵⁷։

Խորենացու պատմության մեջ հայոց գրերի ստեղծման վերաբերյալ հատվածը պահպանվել է Փոքր Կորյունի մեջ, XI դարի մի Տոնականում, որը, լինագրում մի քանի սրբագրությունների հնարավորություն է ընձեռում և միաժամանակ ցույց է տալիս, թե ինչպիսի խեղաթյուրումներ, թյուրագրություններ կարող են պատահել ձեռագրերում։

Բերում ենք սրբագրելի հատվածը.

Տպագրում (էջ 404)

...յաղաթս ապաինի

Եւ տեսանի ոչ ի թուն Լրադ
և ոչ յարթնութեան տեսիլ,
այլ ի սրտին գործարանի
Երեսթացեալ հոգւոյն աշաց
Թաթ ձեռին աջոյ՝ գրելով
ի վերայ վիմի զի որպէս
ի ձեան վերջր գծին՝ կուտուտ
ունեն լաւն։

Եւ ոչ միայն Երեսթացաւ,
այլ և հանդամանք ամենայնի
որպէս յամսն ինչ ի միտս նորա
հուարեցաւ։

Եւ յարուցեալ յաղօթիցն՝
եստեղծ զնշանդիրս մեր։

Ձեռագրում (Փարիզ, էջ 468)

Յանժամ հաւատով առ Աստուած
ապաինի եւ աղաթս... Եւ տեսանէ
ոչ ի թուն Լրադ և ոչ յարթնութեան
տեսիլ, այլ ի սրտին գործարանի
Երեսթացեալ հոգւոյն աշաց՝ Թաթ
ձեռին աջոյ, գրելով ի վերայ վիմի,
զի որպէս ի ձեռն վերջր գծին ունի
լաւն։

Եւ ոչ միայն Երեսթացաւ, այլ և
հանդամանք ամենայնիցն, որպէս
յամենայն ինչ ի միտս նորա հուարեցաւ։
Եւ յարուցեալ յաղաթիցն՝ եստեղծ
զնշանդիրս մեր։

Այստեղ կան մի քանի անհամապատասխանություններ։ Համեմատական
ընագրում օգտագործված ձեռագրերից վեցում չկա «կուտեալ» բառը, իսկ

⁵⁴ Նույն տեղում, էջ 404։

⁵⁵ Ինչորովի՞ն էլ մութ չէ, Կորյունը բավարար չափով ներկայացրել է գրերի ստեղծումը՝
հակիրճ և զեղեցիկ փոխաբերությամբ, ապա՝ գրերի տարրերը և զրատեսակները։

⁵⁶ Մ. Օրմանյան, Խորենացի, էջ 521, ծան. 314։

⁵⁷ Մ. Օրմանյան, Աղղապատում. Կ. Պոլիս, 1912, էջ 275։

մի քանիսում գրված է «կուտակեալ», «կտակեալ», «քանդակեալ», «աւակեալ»։ Այն բացակայում է Փարիզի ձեռագրում։ Որոշ ձեռագրերում չկա «ձեռն» բառից առաջ գրված «ի» նախդիրը։ Կան նաև այլ տարբերակներ, որոնց չենք անդրադառնում։ Այստեղ ամենից կարևորը նախ՝ ձեռն-ձեռն և քար-քարտն բառերի թյուրագրումն է, որոնց հարմարեցնելու համար էլ ժամանակի ընթացքում ավելացել է «ի» նախդիրը և «կուտեալ» բայը։ Բարեբախտաբար վերջին բառը ձեռագրում չկա, չի եղել նաև «ի» նախդիրը, «ձեռն» բառից առաջ։

Ստ. Մալխասյանը բնականաբար այդպես էլ թարգմանել է. «...նրա հոգու աչքերին երևում է աչ ձեռքի թաթ՝ քարի վրա գրելիս՝ այնպես որ քարը գծերի հետքը պահում էր ինչպես ձյունի վրա» (405)։

Այստեղ միտքն այն է, որ Տեսիլքում երևում է աչ ձեռքի թաթը (որ Տիրոջ ձեռքն էր) քարի վրա գրելիս, կարծես թե ձեռքը գրի հետքերը թողնում էր (որոշմում էր) քարտի (մագաղաթի) վրա։ Ուրեմն Տիրոջ ձեռքով գրված գրերը քարի (վիմի) վրա այնպես էին դրոշմվում, ինչպես մագաղաթի վրա (ինչպես Փարիզի ձեռագրում է)։

Հետաքրքրական է նաև ձեռագրում հաջորդ նախադասությունը, որը դարձյալ պարզեցվել, հարմարեցվել է «ձեռն» ու «քարն» բառերին։ «Որպէս յամենայն ինչ» դարձել է «որպէս յամեն ինչ»։ Մինչդեռ ձեռն ոչ միայն երեկաց այլև բոլոր հանգամանքները (նշանագրերի), ինչպես ամեն բան, նրա մտքում հավաքվեցին։ Այստեղ խորհնացին փառաբանում, դրվատում է իր ուսուցչի մտքի տարողունակությունը, որ տեսիլքում երևացած գրերի հանգամանքները նրա մտքում հավաքվել են ինչպես ամեն բան է հավաքվում նրա համապարփակ մտքում։ «Եւ յարուցեալ յաղաթիցն՝ հստեղծ զնշանա-գիրսն մեր»⁵⁸։

Հաջորդ նախադասությունը, որ կցվում է սրան «հանդերձ Հռոփանոսիւս սկսվածքով, ոչ միայն նոր նախադասության, այլև նոր պարբերության սկիզբը պետք է լինի։

Տեղի է ունեցել գրչի շատ սովորական բացթողում և սրբագրիչի՝ սխալ ներմուծում։ Չկա մի ձեռագիր, որտեղ տառ, բառ, նախադասություն բաց թողած չլինի գրիչը։ Սրբագրության ժամանակ (որը գրչության արվեստի շատ կարևոր բաղադրիչներից է) սրբագրիչը շտկում էր գրչի սխալները և բացթողումները՝ գրելով կամ գրչին գրել տալով, մուծում սխալի տեղում՝ չնչնուց հետո, վերևում, տողամիջում, եզրալուսանցքում կամ ստորին լուսանցքում՝ երբ մեծ է բացթողումը։ Բառի, տառի կամ նախադասության վրա և սխալի (կամ մոռացվածի) տեղում դրված մուծման միջոցով նշանի ցուցումով, սրբագրողը լուսանցագրությունը մուծում էր բնագրի մեջ համապատասխան տեղում։ Բավական է մուծման նշանի մի փոքր շեղում (տառ, բառ, տող) և թյուրիմացությունը պատրաստ էր։

Ահա այսպիսի մի թյուրիմացություն է տեղի ունեցել այստեղ, որը սրբագրվում է ըստ բովանդակության, ըստ խորհնացու նախորդ տեսակետի և ըստ Կորյունի վարք Մաշտոցի։

Սկսենք վերջինից.

Կորյուն

Մեսրոպ Մաշտոցը

(Ա) (Եղեսիայում) «Հայրական շափուն ծնեալ ծնունդս նորոգ և սքանչելի՝ սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին» (գրերի ստեղծում)։ (Բ) «Եւ անդ (Եղեսիայում) վաղվաղակի նշանակեալ, անուանեալ և կարգեալ, յօրինէր սիղոբայիւք կապօք» (այբուբենի հորինում)։

(Գ) Անդէն ի նմին քաղաքի (Սամոսատ) «գրիչ ոմն հելլենական դպրութեան Հռոփանոս անուն գտեալ, որով զամենայն ընտրութիւն նշանագրացն...

⁵⁸ Սույն օրինակից է տպագրված «Սոփիեր հայկականք» և «Մատենագրութիւնք նախնեաց» (1894, էջ 19) մատենաշարերում, որտեղ «ձեռն», «քարտ», «յամենայնի» բառերը «վերականգնել» են ըստ Կորյունի ընդարձակ բնագրի։

միանգամայն յօրինեալ և յանկուցեալ» (գրեթէ հարդարում կամ կերպաձևում) (Դ) (Սամոսատում) «ի թարգմանութեան դառնային...» (թարգմանություն): (Ե) (Սամոսատում) «հանդերձ ուսուցանելով զմանկունս գրիչս նմին դպրութեան» (դրչության արվեստի ուսուցում):

Խորենացի

Մեսրոպ Մաշտոց

(Ա) (Եղեսիայում) «Յարուցեալ յաղօթիցն՝ հստեղծ զնշանագիրս մեր (գրեթէ ստեղծում):

(Բ) (Սամոսատում) Հանդերձ Հռոփանոսիւ կերպաձևեալ զգիրս առ ձեռն պատրաստ Մեսրոպայ (գրեթէ հարդարում կամ կերպաձևում):

(Գ) (Եղեսիայում) փոխագրելով զհայերէն աթուրայսն ըստ անսայթաքութեան սիւղարայից հելլենացոց (այբուրենի հորինում):

(Դ) (Սամոսատում) Եւ իսկոյն ի թարգմանութիւն ձեռն արկեալ... (թարգմանություն):

(Ե) (Սամոսատում) Միանգամայն և զարուեստ գրչութեան ուսուցանել առլով իւրոց մանկագոյն աշակերտացն»⁵⁹ (գրչության արվեստի ուսուցում):

Այսպիսով

Խորենացիի մոտ

- 1 Գրեթէ ստեղծում (Եղեսիայում)
- 2 Այբուրենի հորինում (Եղեսիայում)
- 3 Հարդարում կամ կերպաձևում (Սամոսատում)
- 4 Թարգմանություն (Սամոսատում)
- 5 Գրչության արվեստ (Սամոսատում)

Խորենացու մոտ

- 1 Գրեթէ ստեղծում (Եղեսիայում)
- 2 Հարդարում կամ կերպաձևում (Սամոսատում)
- 3 Այբուրենի հորինում (Եղեսիայում)
- 4 Թարգմանություն (Սամոսատում)
- 5 Գրչության արվեստ (Սամոսատում)

Ինչդեռ տեսնում ենք Խորենացու մոտ 2-րդ և 3-րդ կետերը իրենց տեղերը շփոթել են: Բերենք ճիշտ շարադրանքը և բացատրենք, թե ինչպե՞ս կարող էր սխալը տեղի ունենալ:

(ա) (Եղեսիայում) Եւ յարուցեալ յաղօթիցն՝ հստեղծ նշանագիրս մեր (բ) (Եղեսիայում) փոխատրելով զհայերէն աթուրայսն ըստ անսայթաքութեան սիւղարայից հելլենացոց (գ) (Սամոսատում), եւ հանդերձ Հռոփանոսիւ կերպաձևեալ զգիրն առ ձեռն պատրաստ Մեսրոպայ (դ) (Սամոսատում) իսկոյն ի թարգմանութիւն ձեռն արկեալ, խորհրդաբար սկսեալ յԱռակացն յեղու ի հայ բան, նա և աշակերտք նորա Յոհան Եկեղեցացիին եւ Յովսէփ Պաղնացի (ե) (Սամոսատում) միանգամայն և զարուեստ գրչութեան ուսուցանել տալով իւրոց մանկագոյն աշակերտացն:

Սաացվեց (ա) գրեթէ ստեղծում (բ) այբուրենի հորինում (գ) հարդարում կամ կերպաձևում (դ) թարգմանություն (ե) գրչության արվեստի ուսուցում:

Ձեռագիրն արտադրելիս գաղափար ճշգրիտ օրինակից, գրիչը վրիպել էր կամ գ նախադասությունը:

Ձեռագիրը սրբագրելիս, քանի որ մեծ էր բաց թողնվածը, գրվել է ստորին լուսանցքում և վրան մուծման նշան դրվել: Այդ նշանից դրվել է նաև ոչ ճիշտ տեղում, այսինքն ա կամ բ նախադասության վերջում: Այս վրիպումը բավական էր, որ հաջորդ ընդօրինակողը սխալ մուծեր բաց թողումը և ստեղծվեր սույն թյուրիմացությունը: Կամ էլ սրբագրողը նշանը ճիշտ տեղն

⁵⁹ Կ ո Ր Յ ո Ւ Ն, էջ 96, 98:

⁶⁰ Մ ո Վ Ս Ս Խ ո Ր Ե Ն Ա Յ Ի, էջ 404:

է դրել, սխալվել է ընդօրինակող գրիչը, որը սխալ է մուծել բաց թողած նախադասությունը:

Այս բանը տեղի է ունեցել հորենացու երկը ստեղծվելուց ոչ շատ ուշ: Ձեռագրական սույն վրիպումը սրբագրելուց հետո ավելի հստակ երևելում է, որ Հռոփանոսի գործը սահմանափակվում է տառերի հարգարմամբ, կերպաձևամբ, ինչպես ճիշտ նշել են Մ. Աբեղյանը ու Հր. Աճառյանը, և ոչ հնչյունական կողմին:

Խորենացին հայոց գրերի մասին ունի որոշակի տեսակետ. հայոց գրերն ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը առանց որևէ մեկի օգնության, իր հանճարով, որ նա համարում է աստվածային շնորհ. այն աստվածատուր է, ուստի չի կարող նման լինել որևէ այլ գրի, որ մարդն է հնարել:

Նշանագրերն ստեղծելուց, այբուբենը կարգավորելուց գրչության արվեստը, գրատեսակներն ու կետադրությունը սահմանելուց հետո Մեսրոպը Սամոսատում ձեռնարկում է թարգմանության՝ իր Հովհան Եկեղեցացի և Հովսեփ Պաղնացի աշակերտների հետ, սկսելով Սողոմոնի առակներից, միաժամանակ կրտսեր աշակերտներին սովորեցնում էր նորաստեղծ գրչության արվեստը:

Այսպես է ներկայացնում նաև Կորյունը, բայց Խորենացու մոտ միայն Առակները չեն թարգմանվում՝ «եւ իսկոյն ի թարգմանութիւն ձեռն աբկեալ, խորհրդաբար սկսեալ յԱռակացն, բովանդակելով զքսան և զերկու յայտնիսն, և զնոր Կտակս յեղու ի Հայ բան»: Այս հատվածի մասին Ստ. Մալխասյանը գրում է. «Այսպիսի բան չի կարող լինել, որ Մաշտոցը երկու աշակերտների հետ, հենց Ասորիքում թարգմանած և ավարտած լինի Հին և Նոր Կտակարանները: Սա կհակասեր հենց իրեն Խորենացուն, որ հետո (Գ, ծդ) հիշում է, թե ս. Գիրքը թարգմանեց ս. Սահակը ասորերենից, հունարենը չլինելու պատճառով, և այնուհետև (Գ. կա) որ ս. Սահակը և Մեսրոպը հունարենից թարգմանեցին մի անգամ շտապովի թարգմանածը:

Կորյունը միայն հիշում է, թե ս. Մեսրոպը երկու աշակերտների հետ սկսեց թարգմանել, սկիզբ դնելով Սողոմոնի Առակներից (առանց հիշելու մյուս գրքերը), որը շատ բնական էր փորձելու համար, թե նորագույն այբուբենով կարելի՞ է անսխալ արտահայտել հայերենի բոլոր հնչյունները:

Մեզ թվում է, թե բնագրում ընդմիջարկություն է «բովանդակելով զքսան և զերկու յայտնիսն, և զնոր Կտակս յեղու ի Հայ բան» խոսքը, որևէ ձեռագրի լուսանցքից բնագրի մեջ մուծված: Խոսքն էլ սնկապ է «յեղու» բայը չի հարմարվում»⁶¹:

Բայց մեզ ոչ թե որևէ մեկի կողմից կատարված ընդմիջարկություն է թվում, այլ Խորենացուց գրված միջանկյալ նախադասություն, որով նա ուզում է ասել, թե Առակաց գրքի թարգմանությունը, որ կատարում է Մեսրոպը, սկիզբն է և մասը մի անգամ շտապովի թարգմանված գրքերի, այսինքն՝ քսան և երկու հայտնիների և Նոր Կտակարանի, որոնք թարգմանվել են հայերենի, մինչև Կ. Պոլսից ս. Գրքի հունարեն կատարյալ օրինակի բերելը: Ուստի «Եւ իսկոյն ի թարգմանութիւն ձեռն աբկեալ, խորհրդաբար սկսեալ յԱռակացն, բովանդակելով զքսան և զերկու յայտնիսն և զնոր Կտակս, յեղու ի Հայ բան»⁶², պետք է թարգմանել «եւ իսկոյն ձեռնարկեց թարգմանության, խորհրդաբար սկսելով Առակներից, որ եզերում (ամփոփում) է քսան և երկու հայտնի գրքերը և Նոր Կտակարանը, փոխադրում է հայերեն լեզվի»:

Սրանով նաև հայտնի է դառնում, թե մինչև Յոթանասնից թարգմանության հունարեն օրինակը բերելն Աստվածաշնչից քանի գիրք է հայերեն թարգմանվել: Աստվածաշունչը բաղկացած է 66 գրքից: 39-ը Հին, 27 Նոր կտակարանից: Հին կտակարանի 22 և Նոր կտակարանն ամբողջությամբ դառնում է 49 գիրք, որ թարգմանվել է ասորերենից:

⁶¹ Մ ո վ ու ս Խ ո Ր Ե Ն ա ջ ի, Հայոց պատմություն, էջ 523—524, ծան. 325:

⁶² Նույն տեղում, էջ 404:

Պատմագրքի հաջորդ գլխում՝ «Յաղագս դպրութեան Հայոց, Վրաց և Աղուանից», ներկայացված է նախորդ գլխում տեղի ունեցած, վերուստ պար-
տկած հայերեն լեզվի նշանագրերի գործադրությունը հայրենիք վերադար-
ձած շնորհակիտ Մեսրոպ Մաշտոցի ձեռքով: Այդ գործադրությունը կատար-
վում է Հայոց, Վրաց և Աղվանից աշխարհներում, այդ աշխարհների թագա-
վորների, հոգևոր առաջնորդների օժանդակությամբ և շնորհալի թարգմաննե-
րի մասնակցությամբ, Մեսրոպ Մաշտոցի ջանքերով:

Մեսրոպ միջագետքյան առաքելությունը փառավոր կերպով ավարտե-
լուց հետո վերադարձավ հայրենիք, բերելով հայոց լեզվի նշանագրերը, նրան-
ցով կադմած այրուրենը, Սողոմոնի Առակների առաջին հայագիր մատյանը,
նոր դրոշմյան արվեստը տիրապետող աշակերտներ, որոնք պետք է օգնեին
իրենց ուսուցիչին: «Ընդ այն ժամանակս,—գրում է Խորենացին,—եկեալ Մես-
րոպայ, և բերեալ զնշանագիրս մերոյ լեզուի, և հրամանաւ Վռամշապհոյ և
մեծին Սահակայ ժողովեալ մանկունս ընտրեալս, ուշեղս և քաջասունս, փափ-
կաձայնս, և րկարողիս և դպրոցրս կարգեաց յամենայն գաւառս, և ուսոյց
յրնաւ կողմանս բաժնոյն Պարսից, բայց ի Յունաց մասէն...»⁶³:

Այսպես է նաև Կորյունի ճշգրտված օրինակում «Եւ արդ եկեալ յիշելին
(Մաշտոց) մերձ ի թագաւորական քաղաքն, աղդ լինէր թագաւորին և սրբոյ
ևսկիսկոյոսին: Որոց առեալ զամենայն նախարարագունդ ամբոխս, ի քա-
ղաքէն իլկտլ սլասահէին երանելոյն... ցանկալի ողջոյն միմեանց տուեալ...
բարբառօք ցնծութեան և երգօք հոգևորօք և բարձրագոյն օրհնութեամբ ի քա-
ղաք գառնային...»

Ապա առեալ ևրանելի հոգարարձուացն զհանկարծագիտ խնդրելին հայ-
ցէին և յարբայլ մանկունս մատաղս, որով զնշանագիրսն արժարծել մարթաս-
ցնու: Եւ յորժամ բազումք ի նոցանէ տեղեկանային, ապա հրաման տայր
ամենայն ուրեք նովին կրթել... գումարել ի կողմանս, ի գաւառս, ի տեղիս
տեղիս Հայաստան աղղին դասս դասս դաշակերտեալսն ճշմարտութեանն,
զհասուցելոցս ի կատարումն գիտութեան, բաւականս և առ ի դայլսն ղեկու-
ցանելոյն»⁶⁴:

Հայաստանի պարսկական բաժնում դպրոցներ բաց անելու մասին գրե-
լուց հետո, հունականում նորաստեղծ գիրը տարածելու և դպրոցներ բաց
անելու մասին պատմությունը թողնելով հետագային, Խորենացին այս նույն
գլխում շարունակում է Մեսրոպի լուսավորչական առաքելությունը հարևան
Վրաց և Աղվանից աշխարհներում: Անցնելով Վրաստան՝ նրանց համար նշա-
նագրեր է հորինում «տուեցելովն ի վերուստ շնորհաւն» հելլեն և հայ լեզու-
ներից վրացերենի թարգմանիչ Զաղայի օժանդակությամբ. նրանց հովանա-
վորում էին Բակուր թագավորն ու Մովսես եպիսկոպոսը: Ընտրում է երեխա-
ներ, բաժանում երկու դասի և նրանց համար ուսուցիչներ է թողնում իր
ավագ աշակերտներից Տեր Խորձենացուն ու Մուշե Տարոնացուն:

Այնուհետև անցնում է Աղվանից աշխարհ, թագավոր Արսվաղենի և
ևսկիսկոպոսապետ Նրեմիսյի մոտ, որոնք ընդունում են իրենց համար նշա-
նագրեր ստեղծելու Մեսրոպի առաջարկը և նրան հանձնում «ընտիր» երեխա-
ներ: Մեսրոպը Սյունիքից կանչում է Բենիամին շնորհալի թարգմանչին, որը
ներկայումս է Մաշտոցի աշակերտ Անանիա եպիսկոպոսի հետ: Սրանց հետ
նշանագրեր է ստեղծում Գարգարացոց լեզվի համար: Վերակացու թողնելով
իր Հովնաթան աշակերտին, վերադառնում է Հայաստան:

Եվ Կորյունը և Խորենացին հայոց լեզվի նշանագրերի ստեղծման մա-
սին գրում են այն, ինչ Մեսրոպ Մաշտոցն է պատմել: Այդ բանը ասել է նաև
Կոստանդնուպոլսում, բյուզանդական կայսր Թևոդոսին՝ «պատմեաց մեղ
Մեսրոպ եթե կատարումն արուեստիցս ի շնորհաց վերնոյն եղև»: Կորյունը
գրում է, որ Մաշտոցը «հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ և սքանչելի

63 Մովսես Խորենացի, էջ 406:

64 Ա. Մաթևոսյան. Կորյունի Մեսրոպ Մաշտոցի պատմության մի թղթի տեղափո-
խություն.—«Բաղմամուլ», Վենետիկ, 1989, № 1—4:

սուրբ աշուղն իւրով, նշանագիրսն հայերէն լեզուի»։ Մեսրոպ Մաշտոցը հայ-րաւար, այսինքն՝ աստվածաբար (որովհետեւ շնորհը նրանից էր ստացել, որի ծնունդներն են միայն կոչվում «սքանչելի ծնունդ» ինչպես Քրիստոսը՝ Աստծու որդի աստվածը, որի համար էլ Մարիամ Աստվածածինը կոչվում է նաև «Սքանչելածին»), իր սուրբ աշուղ ստեղծում է հայերեն լեզվի «սքանչելի ծնունդներ»՝ նշանագրեր։

Խորհնացին նկարագրում է շնորհ տալու պահը. Մեսրոպը տեսիլքում տեսնում է վերին սուրբ աշը, որը վեմի վրա գրում է հայերեն լեզվի նշանագրերը, այնպիսի հստակութեամբ, կարծես ձեռքը մագաղաթի վրա էր գրում, և բոլոր տառերի հանգամանքները տպավորվում են Մեսրոպի մտքում, որը տեսիլքից արթնանալով ստեղծում է հայոց լեզվի նշանագրերը։

Մեսրոպ Մաշտոցի աստվածատուր շնորհքի արդյունքը հայերեն լեզվի երեսունվեց նշանագրերն էին, որոնք արդեն ունեին իրենց տեսակները։ Վրաց դիր ստեղծելու համար մնում էր վրաց լեզվի հնչյունական համակարգը բացահայտել։ Մեսրոպ Մաշտոցը «տուեցնելովն ի վերուստ շնորհան, հանդերձ Զաղայի ումամբ թարգմանաւ հելէն և հայ լեզուի»⁶⁵ բացահայտում են համակարգը և հնչյուններին հարմարեցնում Մեսրոպյան նշանագրերը։ Կորյունի արտահայտութեամբ՝ «եւ առնոյր կարգեալ նշանագիրս վրացերէն լեզուին ըստ շնորհեցելոյն նմա ի Տեառնէ, գրէր, կարգէր և օրինօք յարդարէր»⁶⁶։

Անցնելով Աղուանք և քննելով «զբանս աղուաներէն լեզուին, առնէր ապա նշանագիրս ըստ վերնապարգեւ կորովի սովորութեան իւրում և յաջողութեամբ Քրիստոսի շնորհան կարգեալ և հաստատեալ կշռէր»⁶⁷։ Իսկ Խորհնացին գրում է. «առնէ և նոցա նշանագիրս տուեցելովն ի վերուստ շնորհան»⁶⁸։

Երկու դեպքում էլ պետք է հասկանալ, որ Մեսրոպը նրանց իր ունեցածից է տալիս, այն գանձից, որի համար նա այնքան երկնեց զբաղվում աշխատութեանց համբերեալ», մի հանգամանք, որ վրաց և աղվանից այբուբենները հորինելիս չի արձանագրվում։ Այս իրողությունը հասկանալի է դառնում, երբ մենք ընդունում ենք, որ Մեսրոպ Մաշտոցը իրեն տրված շնորհի արդյունք հայոց լեզվի երեսունվեց նշանագրերից է կազմում վրացիների և աղվանների համար այբուբեններ։ Այսինքն «աստ շնորհեցելոյն նմա ի Տեառնէ՝ կարգեալ նշանագիրս վրացերէն լեզուի» (Կորյուն) կամ «առնէ նոցա (վրացոց) նշանագիրս տուեցելովն ի վերուստ շնորհաւքն» (Խորհնացի)։ Նույնը նաև աղվանների համար հորինվածին է վերաբերում։ Իսկ վերուստ Մեսրոպը հայերեն նշանագրերն ստեղծելու շնորհքն էր. ստացել և ստեղծել։

Ինչպես հայտնի է, որևէ լեզվի համար գիր ստեղծելու առաջին քայլը տվյալ լեզվի հնչյունական համակարգի բացահայտումն է։ Հայոց լեզվի հնչյունական համակարգի բացահայտումը կատարվում էր հունարեն, ասորերեն հետո նաև պարսկերեն գիր օգտագործելիս, ամբողջ IV դարի ընթացքում, երբ այդ գրերով և հայերեն բառերով գրություններ էին կազմվում։ Այդ համակարգը կարգավորեց, կանոնավորեց Մեսրոպ Մաշտոցը, գիր ստեղծելու նախօրյակին, և փորձվեց դանիելյան գիրը ստուգելիս, երբ ապացուցվեց, որ սրանք հայերեն չեն, այլ օտար գրեր։

Մեսրոպ Մաշտոցը վրացերեն և աղվաներեն այբուբեններն ստեղծեց վրացի և աղվան թարգմանիչների հետ, որոնք տիրապետում էին հունարենին և ասորերենին։ Ինչպես Մեսրոպը հունարեն գրի և լեզվի օգտագործմամբ կարգավորեց հայոց լեզվի հնչյունական համակարգը և նրան համապատասխան գիր ստեղծեց, այնպես էլ վրաց և աղվանից թարգմանիչների հետ, դարձյալ հունարեն գրի և լեզվի օգտագործմամբ, կարգավորեց այդ լեզուների հնչյունական համակարգը, իսկ որպես գիր օգտագործեց հայոց նշանագրերը, հնչյունական տարբեր համարժեքներով։ Այս դորոգությունն-

65 Մ ո վ ս ե ս Խ ո Ր Ե Ն ա Յ ի, էջ 406։

66 Կ ո Ր յ ու ն, էջ 110։

67 Ն ու յ ն տեղում, էջ 116։

68 Մ ո վ ս ե ս Խ ո Ր Ե Ն ա Յ ի, էջ 406։

րի հաղորդության արագությունը բացատրվում է նրանով, որ վրաց ու աղվանից աշխարհներում ևս Սուրբ Գիրքը գործածվում էր հունարեն և ասորերեն լեզուներով, ուստի նրանք էլ որոշակի պատկերացումներ են ունեցել իրենց լեզվի հնչյունական համակարգի մասին, որը և հեշտացրել է Մեսրոպի գործը՝ կարգավորելու նրանց լեզուների այբուբենները իր նշանագրերով:

Հարց է ծագում. ինչպե՞ս կարող էր երևույթնային նշանագրով կազմել այբուբեն աղվաններին 52 նշանագրերի հասարակությամբ Մեսրոպ Մաշտոցը օգտագործել է նաև հայոց գրատեսակները, մասնավորապես այն նշանագրերի տարատեսակները, որոնց գրությունը տարբերվում էր բուն գրից: Այն մասին հանդամանորեն կանգնողական հայոց գրերի ծագման ներքին աղբյուրները քննելիս Այստեղ սիմվոլիկ նկատենք, որ, ինչպես վկայում է Կորյունը, Մեսրոպ Մաշտոցը ստեղծել է ոչ թե հայերեն մեկ, այլ մի քանի գրատեսակ, որոնք հղատգործված ենք անսնունձ վրաց և աղվանից այբուբեններում:

Եվ պատահական չէ. որ Խորենացիի հայոց, վրաց և աղվանից գրությունների մասին պատմում է նույն վերնագրի տակ՝ «Յաղագս դպրութեան Հայոց, Վրաց և Աղուանից», որպես նրա վերնապարզ և շնորհի արգյունք դրերի միջոցով այբուբենների կարգման, գաղտնիների հաստատման և գրությունից սկզբնաղբյուրման միասնական պատմություն:

МОВСЕС ХОРЕНАЦИ О МЕСРОПОВСКИХ ПИСЬМЕНАХ

А. С. МАТЕВОСЯН

Резюме

Мовсес Хоренаци в своей Истории уделяет довольно большое место деятельности своего учителя Месропа Маштоца и истории создания армянской письменности. По этой причине его сочинение начиная с V в. и по сей день использовали в качестве достоверного первоисточника для изучения данного вопроса даже те исследователи, которые пытались пересмотреть его датировку. Последнее обстоятельство, естественно, породило разногласия касательно некоторых сведений Хоренаци, тем более что они не совпадали со свидетельствами Корюна. Наши исследования последних лет в области палеографии и кодикологии, в особенности произведенная нами перестановка в сочинении Корюна двух отрывков, касающихся писем Даниила, начинавшихся со слов «Ապա տեղա...» и «Յաղագս վաղվադակի...» («Բազմավէպ» Վենետիկ, 1989, № 1—4), правомерность которой подтверждается свидетельствами Хоренаци, новейшее исследование древнего (IX в.) фрагмента из Истории Хоренаци о письменах Даниила, сопоставление его с критическим текстом, конъектуры соответствующего места и комментарии к нему, а также рассмотрение отрывка из Хоренаци, сохранившегося в древнейшем списке (XI в.) Малого Корюна, вносят определенные коррективы в относящийся к указанной проблеме текст Истории Хоренаци и устраниают его несоответствия с текстом Корюна.